ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 31.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/52

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.05.2017թ. թիվ 03/26-3/8530-18 գրությամբ «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ 06952357) (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 05.05.2018թ. թիվ ԴՎԱ/1580 գրության հիման վրա, 11.05.2018թ. «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 05.05.2018թ. թիվ ԴՎԱ/1580 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ գրասենյակային և կենցաղային կահույքի գնման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/16 ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում 13-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող ճանաչվեց՝ «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ն, որը սահմանված կարգով ծանուցվեց՝ ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմում (Հավելված N6) և առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր (Հավելված N6.1) ներկայացնելու վերաբերյալ: «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը չներկայացվեցին:

Հիմք ընդունելով ընթացակարգի հրավերի 8.13 կետի 4-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց 13-րդ չափաբաժնի մասով մերժել «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ի հայտը:»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «Տ-Ինդասթրի» ՓԲԸ ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը դիմել է «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.05.2017թ. թիվ 03/26-3/8530-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Շուշանիկ Վարդանյանը:

4. **<u>ՍՑ-ԷՍ-2018/52 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 11.05.2017թ. թիվ 03/26-3/8530-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 05.05.2018թ. թիվ ԴՎԱ/1580 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/16 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/16 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 07.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 և 26.04.2018թ. ժամը 11:40-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, Ընկերության կողմից ներկայացված հայտի պատճենը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ գրասենյակային և կենցաղային կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/16 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝

- N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/16 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:
- N 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/16 ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրի պահանջներին: Նույն հայտարարությամբ Ընկերությունը

պարտավորվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/16 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Հանձնաժողովը 07.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության N 1 հավելվածով որոշել է՝ ընթացակարգի 13-րդ չափաբաժնի մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ին:

Նույն արձանագրության 4.2 կետով Հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովը 26.04.2018թ. ժամը 11:40-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.3 կետով արձանագրել է, որ «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը չներկայացվեցին և հիմք ընդունելով ընթացակարգի հրավերի 8.13 կետի 4-րդ ենթակետը՝ որոշել է 13-րդ չափաբաժնի մասով մերժել «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ի հայտը :

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին նիստի ժամանակ համակարգչի միջոցով բացեց Ընկերության պաշտոնական՝ tindustry1711@gmail.com էլ. հասցեն և ցույց տվեց, որ 16.04.2018թ. էլեկտրոնային փոստի միջոցով ստացել է ծանուցում՝ info@armeps.am հասցեից, սակայն ստացված ցանուցման վերնագիրը չի պաարունակել որակավորումը հիմնավորող փաստթղթեր ներկայացնելու վերաբերյալ որևէ նշում, ավելին, այն վերնագրված էր հետյալ կերպ. «Գառնիի «Քարե սիմֆոնիա» բնական հուշարձան տանող ճանապարհի վերականգնում» ԱՄՄ հայտերի բացման արձանագրություն, իսկ ծանուցման միջնամասում նշված են եղել «խնդրում ենք չպատասխանել այս նամակին» և հաշվի առնելով նշված հանգամանքները Ընկերությունը չի անդրադառձել ստացված ծանուցմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

• 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;

• 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման

չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

- 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 8.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Սույն ենթակետով սահմանված ժամկետում ապրանքի ամբողջական նկարագիրը ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում

հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված ծանուցման վերնագրում որևէ կերպ չի արտացոլվել որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու պահանջը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ վերը նշված ծանուցմանը կցված էլեկտրոնային փաստաթուղթը բացվում է «խնդրում ենք չպատասխանել այս նամակին» նշմամբ:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «խնդրում ենք չպատասխանել այս նամակին» գրառումը նույնպես կարող էր նման թյուրիմացության պատճառ դառնալ, քանի որ նշված ծանուցման ստացումն ինքնին ենթադրում է մասնակցի կողմից սահմանված ժամկետում պատասխանի տրամադրում՝ հրավերով նախատեսված որակավորումը հիմնավորող փաստթղթերի ձևով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.05.2017թ. թիվ 03/26-3/8530-18 գրությամբ «Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ 06952357) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ